Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Յա. Զարոբյանի անվան N 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Առարկա՝ Դասվար

Թեմա՝ Անհատական ուսուցման պլանով աշխատելու կարևորությունը

Վերապատրաստող, մենթոր՝ Արմենուհի Մելքոնյան

Ուսուցիչ՝ Հասմիկ Խաչատրյան

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ 1. Հետազոտական մաս ՝ Անհատական ուսուցման պլան----------5

Գլուխ 1.1 Անհատական ուսուցման պլանը Հայաստանում----------10

Գլուխ 2. Խորհուրդներ ուսուցիչներին----------15

Եզրակացություն----------19

Եզրույթների բառարան----------21

Գրականության ցանկ----------22

Ներածություն

Արդիականությունը՝

Մարդու գերակա իրավունքների շարքում կարևորներից է կրթության իրավունքը, որի հիմնահարցերը մշտապես եղել և մնում են բոլոր քաղաքակիրթ երկրների ու ժողովուրդների ուշադրության կենտրոնում: Այսօր էլ անհնար է ունենալ կրթության բարձր որակ և լինել մրցունակ, եթե երկրի կրթության համակարգը չի ինտեգրվում միջազգային կրթական գործընթացներին և չի ապահովում միջազգային չափանիշներ: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ համակարգը զարգանա բարեփոխումների ճանապարհով, ինչն այսօր որդեգրել է Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը: Այդ բարեփոխումները խարսխվում են մարդասիրական, ժողովրդավարական կրթության արժեքների վրա, ուր առանձնահատուկ տեղ են գրավում հատուկ կրթության հիմնահարցերը, մասնավորապես՝ ներառական ուսուցմամբ կրթության խնդիրները: Այս համատեքստում **արդիական են** դառնում զարգացման խանգարումներ ունեցող երեխաներին ցուցաբերվող սոցիալ-մանկավարժական օգնության կազմակերպման հարցերը, դրանց լուծման ուղիները, ինչպես նաև ԱՈՒՊ-ով իրականացվող կրթությունը ԿԱՊԿՈՒ երեխաների հետ:

Սույն հետազոտական աշխատանքի **նպատակն է** ուսումնասիրել ԱՈՒՊ –ով իրականացվող կրթությունը ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքում և հասկանալ դրա կարևորությունը:

Հետազոտական աշխատանքի **խնդիրներն են՝**

1. Խորացնել գիտելիքները անհատական ուսուցման պլանի վերաբերյալ:
2. Զարգացնել Հայաստանում Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ կրթության կազմակերպումը:

Հետազոտական աշխատանքը իրականացնելիս ուսումնասիրել ենք Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպումը:

Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր երեխայի կրթությունը կազմակերպվում է նրա ԱՈՒՊ-ում սահմանված նպատակներին համապատասխան: Հայաստանի Հանրապետության Կրթության

մասին օրենքում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին 2014թ.ին ընդունված օրենքի հոդված 3-ի 10.8 կետի համաձայն՝ անհատական ուսուցման պլանը հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ է, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (ներառյալ՝ աջակցող ծառայությունները)։ Անհատական աջակցման պլանը կազմված է երկու բաղադրիչից՝ անհատական ուսուցման պլան (ԱՈՒՊ) և մանկավարժակահոգեբանական աջակցության ծառայությունների անհատական պլան (ՄԱԾԱՊ)։ ԱՈՒՊ-ը գրավոր փաստաթուղթ է, որտեղ սահմանվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի ուսումնական, սոցիալական և ֆունկցիոնալ առանձնահատուկ նպատակները։ ՄԱԾԱՊ-ը ներկայացնում է աշակերտի ուսումնական, սոցիալական և ֆունկցիոնալ նպատակներին հասնելու յուրահատուկ միջամտությունները։ Այս փաստաթղթերը էական նշանակություն ունեն դպրոցներում, որովհետև ներառական միջավայրերում յուրաքանչյուր երեխայի դեպքում կարող են կիրառվել դասավանդման յուրահատուկ մոտեցումներ և ակնկալվել տարբեր կրթական վերջնարդյունքներ։

Գլուխ 1. Հետազոտական մաս՝ Անհատական ուսուցման պլան

Հետազոտական աշխատանքը իրականացնելիս ուսումնասիրել ենք անհատական ուսուցման պլանը և դրա կիրառելիությունը։ Այսօր Հայաստանի Հանրապետությունում ներառական ուսուցմամբ կրթություն են իրականացնում բազմաթիվ դպրոցներ, որտեղ հատուկ կարիքներ ունեցող երեխաները՝ տարաբնույթ խնդիրներով, իրենց կրթությունն են ստանում բնականոն զարգացում ունեցող իրենց տարեկիցների հետ։ Բացի դպրոցներից՝ մեր երկրում գործում են նաև մի շարք կենտրոններ և հասարակական կազմակերպություններ, որոնք զբաղվում են տարբեր խանգարումներ ունեցող երեխաների խնդիրներով, կատարում կարևոր գործառույթ՝ լուծելով երեխայի անխաթար սոցիալականացման հիմնախնդիրը։ Այսօր ինչպես մասնագետների, այնպես էլ հասարակության գերակշիռ մասի կարծիքով կենսագործունեության սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաներին

մեկուսացնելով առանձին հատուկ ուսումնական հաստատություններում՝ զրկում ենք նրանց ճիշտ աշխարհընկալումից, սոցիալականացման հնարավորությունից: Երեխաների մեկուսացումը հատուկ կրթական հաստատություններում բերում է նրան, որ նրանք զրկվում են մի շարք սոցիալական կապերից: **Ուստի ներառական ուսուցմամբ կրթության քաղաքականության հիմքում երեխայակենտրոն ուսուցումն է, որի էությունը ոչ միայն երեխայի սահուն ներառումն է իր նորմալ տարեկիցների շրջանում, այլև յուրաքանչյուր երեխայի պահանջմունքների գնահատումն ու կրթության գործընթացին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսումը:** Ի վերջո, քաղաքակիրթ աշխարհում արդեն վաղուց ընդունված է, որ սահմանափակ կարողություններով երեխաները պետք է սովորեն, աշխատեն և հաղորդակցվեն նորմալ հասակակիցների հետ, հավասար իրավունքներով:

Հայաստանի Հանրապետության Կրթության մասին օրենքում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին Կրթության մասին ՀՀ օրենքի (2014)՝ ԱՈՒՊ-ը և ՄԱԾԱՊ-ը կազմվում են կրթության առանձնահատուկ պայմանների վկայագրված կարիք ունեցող երեխաների համար: ԱՈՒՊ-ի նպատակը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման նպատակների և խնդիրների ձևակերպումն է. դրանք կարող են վերագնահատվել և փոփոխվել երեխայի ուսումնառության ընթացքում: ԱՈՒՊ-ները օգտակար են ուսուցիչների, ծնողների և աշակերտների համար, քանի որ պարունակում են տեղեկատվություն այն մասին, թե ինչ է երեխան սովորելու դպրոցում: Օրինակ, եթե տվյալ դասարանում սովորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա, ուսուցիչը կարող է ԱՈՒՊ-ը օգտագործել դասավանդումը պլանավորելու համար: Ցանկացած դասի համար ԱՈՒՊ-ը օգնում է պլանավորելու լրացուցիչ օժանդակություն, հարմարեցնելու դասավանդման նյութերը կամ առանձին օգնություն տրամադրելու աշակերտին՝ բովանդակությունը հասկանալու համար: ՄԱԾԱՊ-ը ուսուցիչներին օգնում է իմանալու, թե ինչ թերապևտիկ կամ լրացուցիչ, հատուկ կրթական ծառայություններ է ստանում երեխան, ինչպես նաև օգնում է պլանավորելու իրենց աշխատանքը երեխայի կարիքներին համապատասխան: ԱՈՒՊ-ի և ՄԱԾԱՊ-ի օգնությամբ ծնողները հստակ տեղեկատվություն են ստանում երեխայի ակադեմիական, սոցիալական և

ֆունկցիոնալ առաջընթացի մասին: Առաջընթացի տարեկան վերլուծությունների միջոցով ծնողները կարող են տեսնել, թե արդյո՞ք իրենց երեխան ստանում է այն ուշադրությունը, որը անհրաժեշտ է դպրոցում մասնակցության և առաջընթաց գրանցելու համար: **Վերջապես, ԱՈՒՊ-ն ու ՄԱԾԱՊ-ը առաջին հերթին օգտակար են երեխաների համար, որովհետև կրթական ծրագրերը համապատասխանեցվում են նրանց կրթական կարիքներին:**

ԱՈՒՊ-ի միջոցով ձևակերպվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության նպատակները: Անհատական կրթական պլաններ կոչվող նմանատիպ փաստաթղթեր տարիներ շարունակ կիրառվել են ԱՄՆ-ում և ուղղված են եղել պարզելուն, թե որքանո՞վ է երեխայի կրթություն ստանալու իրավունքը իրացվում: ԱՄՆ-ում սովորողի կրթական և թերապևտիկ նպատակների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են միևնույն փաստաթղթում: Հայաստանում այս ինֆորմացիան զետեղված է երկու առանձին փաստաթղթում՝ ԱՈՒՊ-ում և ՄԱԾԱՊ-ում: Երկուսն էլ բազմամասնագիտական թիմին, այդ թվում ուսուցչին, ներկայացնում են երեխաների կրթական, սոցիալական և ֆունկցիոնալ նպատակների վերաբերյալ որոշումների արձանագրությունները (Everett, 2017): Անհատական կրթական պլանի, ԱՈՒՊ-ի և ՄԱԾԱՊ-ի հիմնական առանձնահատկությունը SMART նպատակներն են: Jung (2007) տվել է SMART նպատակի նկարագրությունը: Ստորև բերված օրինակը վերցված է Միացյալ Նահանգներում օգտագործվող անհատական կրթական պլանից և կազմված է մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող սովորողի համար: Նպատակները վերաբերում են կրթական, սոցիալական և ֆունկցիոնալ ոլորտներին: Այս մոդելն օգնում է երեխայի համակողմանի զարգացմանը: Երեխան (Լաուրա պայմանական անունով) ակադեմիական տեսակետից շատ է զիջում դասընկերներին և մյուս դասընկերների հետ դասապրոցեսին մասնակցում է մասնակիորեն որոշակի դասաժամերի ընթացքում: Ի տարբերություն իր դասընկերների, նրա համար սահմանված են ուսման այլ՝ անհատական նպատակներ: Թիմը Լաուրայի կրթության համար սահմանել է չորս նպատակ: Որոշվել էր, որ երեխան՝ թեև անհատական, առանձնահատուկ նպատակներին, օրվա մի մասը կանցկացնի իր համադասարանցիների հետ: Օրվա մնացած ժամանակահատվածը Լաուրան

անցկացնում է դպրոցի տարածքում տեղակայված այլ սենյակներում՝ յուրացնելով կյանքի հիմնական հմտությունները, օգտվելով բազմազան մասնագետների ծառայություններից և կատարելով ֆիզիկական վարժություններ: Ծառայությունների վերաբերյալ որոշումներն ընդունել էր բազմամասնագիտական թիմը՝ Լաուրայի ծնողների հետ միասին: Թիմը որոշել էր, թե գիտելիքների որ մասը Լաուրան կյուրացնի իր համար առավել արդյունավետ, փոքր դասարանում, և որ մասը՝ սովորական դասարանում: Ստորև ներկայացված են Լաուրայի կրթության նպատակներից չորսը: Դրանք յուրահատուկ են, չափելի, մատչելի, իրատեսական և ժամկետային: Դրանք անդրադառնում են ակադեմիական, ֆունկցիոնալ հմտություններին և ֆիզիկական զարգացմանը: Լաուրայի կրթության համար սահմանված նպատակներից յուրաքանչյուրը հիմնված է նրա ֆունկցիոնալության ընթացիկ մակարդակի, զարգացման հեռանկարի վրա և հնարավորություն է տալիս պլանավորելու նրա հաջորդ տարվա ուսուցումը և թերապիան:

Ուսումնասիրել ենք հետևյալ ԱՈՒՊ-ը և լրացրել համապատասխան կետերը:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆ՝ ԱՈՒՊ **Հաստատված՝ <u><<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Յա. Զարոբյանի անվան N 2 հիմնական դպրոց>> ի կողմից:</u>** **Տնօրեն՝ <u>_Կ. Գևորգյան</u>** **Հաստատման ամիս, ամսաթիվ, տարի _**
1. ՍՈՎՈՐՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1.1 Ազգանուն, անուն, հայրանուն Ք. Ե. Ա.

1.2 Ծննդյան վայր քաղաք Սևան

1.3 Ծննդյան օր, ամիս, տարեթիվ 23.06.2007թ.

1.4 Սեռը՝ ☐ իգական √ արական

1.5 Քաղաքացիությունը Հայաստանի Հանրապետություն

1.6 Բնակության հասցեն ----------

1.7 Ուսումնական հաստատությունը <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Յա. Զարոբյանի անվան N 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

1.8 Դասարանը (նշել ուսումնական տարին) 9գ /2022-2023/

1.9 Ծնողների (օրինական ներկայացուցիչների) անուններն ու հեռախոսահամարները _

1.10 Արտակարգ իրավիճակների դեպքում՝ կապի միջոց՝ աշխատանքային և բնակարանի հեռախոսահամարներ _

Նկ.1

ԱՈՒՊ-երի կազմման գործընթացքում առկա է երեք առանցքային խնդիրը: Ծնողների ճնշող մեծամասնությունը գաղափար անգամ չունի, թե ինչ է իրենից ներկայացնում ԱՈՒՊ-ը և որն է դրա նպատակը: Բնականաբար, ծնողները չեն մասնակցում ԱՈՒՊ-երի մշակմանը և պատկերացում չունեն, թե որքանով է իրենց երեխաների կրթության փաստացի կազմակերպումը բխում երեխաների՝ ԱՈՒՊ-ում ամրագրված կարիքներից: ԱՈՒՊ-երի կազմման ընթացքում հանդիպող մյուս խնդիրը կապված է բազմամասնագիտական և առարկայական ուսուցիչների միջև թույլ համագործակցության հետ: Մասնավորապես խոսքը գնում է այն մասին, որ շատ դեպքերում առարկայական ուսուցիչները բավարար ուշադրություն չեն հատկացնում ԱՈՒՊ-ում 11 նախատեսված իրենց բաժինները լրացնելուն՝ պատճառաբանելով, որ ԿԱՊԿՈՒ երեխաներով պետք է զբաղվի բազմամասնագիտական թիմը, այլ ոչ թե

առարկայական ուսուցիչները: Երրորդ խնդիրը կայանում է նրանում, որ ԱՈԻՊ-երի վերանայման ընթացքում ամրագրվում է միայն երեխայի՝ առաջընթաց ունենալու կամ չունենալու փաստը: Եթե որևէ առաջընթաց չի դիտարկվում, ապա վերջնանպատակը փոփոխվում է կամ մնում է նույնը: Բավարար ուշադրություն չի դարձվում այն գործոնների վերլուծությանը, որոնք կարող են հիմք հանդիսանալ առաջընթացի բացակայության և ըստ այդմ՝ մեթոդների և մոտեցումների մեջ փոփոխություններ կատարելու համար:

Գլուխ 1.1 Անհատական ուսուցման պլանը Հայաստանում

ԱՈԻՊ-ը համեմատաբար վերջերս է ներդրվել Հայաստանում: Ըստ համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի՝ համընդհանուր ներառական կրթությունը նախ ներդրվել է Սյունիքի մարզում (2017թ.-ին), ապա Տավուշի և Լոռու մարզերում: ԱՈԻՊ-ի առաջընթացը ներկայացվում է սույն դասագրքի հրապարակման պահի դրությամբ:

1. Եթե ծնողները, ուսուցիչները կամ տնօրենը կասկածում են, որ որևէ երեխայի կրթության իրավունքը լիարժեք չի իրացվում, հրավիրվում է խորհրդակցություն: Դպրոցը տրամադրում է լրացուցիչ աջակցություն և կազմակերպում գնահատումներ դպրոցում: Եթե երեխային անհրաժեշտ են լրացուցիչ գնահատումներ, ծնողների

համաձայնությամբ դպրոցը դիմում է գնահատման կենտրոն և փոխանցում է երեխայի մասին հիմնական տեղեկություններ։

2. Հաջորդ մի քանի շաբաթների ընթացքում գնահատման կենտրոնի անձնակազմը կատարում է այդ երեխայի գնահատումը և նրան դիտարկում է դպրոցի ներսում։ Գնահատող փորձագետները կարող են օգտվել տարբեր գնահատումներից (օրինակ՝ ֆունկցիաների միջազգային դասակարգումից), հարցազրույցներ անցկացնել ծնողների, ուսուցիչների և աշակերտի հետ և դիտարկումներ կատարել դասարանում։ Գնահատման ավարտին հրավիրվում է հանդիպում՝ ԱՈՒՊ -ի քննարկման համար։

3. Բազմամասնագիտական թիմը, որը ներառում է աշակերտին, ծնողներին, ուսուցիչներին, տնօրենին, համապատասխան մասնագետներին և գնահատման կենտրոնի անձնակազմի ներկայացուցիչներին, հանդիպում և մշակում է աշակերտների անհատական ուսուցման պլանը, սահմանում նպատակները։ Եթե երեխան ունի նեղ մասնագիտական միջամտության կարիք, մշակվում է նաև մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների անհատական պլանը (ՄԱԾԱՊ)։ ԱՈՒՊ-ի կազմման նախնական հանդիպմանը թիմի անդամներն անդրադառնում են ԱՈՒՊ ձևաթղթում նշված բոլոր հարցերին, հնարավորինս պատասխանում դրանց։ Վերջնական փաստաթղթի ստորագրումից հետո այն դառնում է պայմանագիր դպրոցի, նրա աշխատակիցների, գնահատման կենտրոնի, ծնողների և երեխայի միջև։ Պլանը պետք է ունենա չափելի նպատակներ, որոնց առաջընթացը կարող է հաճախակի ստուգվել։ Այնուհետև թիմը հանդիպում է տարին մեկ անգամ՝ նպատակների իրագործման առաջընթացը ստուգելու և հաջորդ տարվա պլանը կազմելու համար։ ԱՈՒՊ գործընթացը պետք է կառուցվի փաստերի հենքի վրա և լինի մասնակցային։ Սակայն այն, ինչ ծրագրվում է տեսությամբ և քաղաքականության մեջ, դեռևս լիովին չի ներդրվել գործնականում։ Կրթական հետազոտությունների և խորհրդատվության կենտրոնը (2013) եզրակացրել է, որ Հայաստանում ԱՈՒՊ-ի իրականացմանն առնչվող տարբեր խնդիրներ կան։

Ըստ կենտրոնի.

● բազմամասնագիտական թիմերը հստակ չեն պատկերացնում իրենց դերը,

● ուսուցիչներն անտարբեր են երեխաների անհատականացված նպատակների նկատմամբ,

● կադրերը սուղ են, ինչը հնարավորություն չի տալիս հասնելու անհատականացված նպատակներին,

● համագործակցությունը բազմամասնագիտական թիմերի ներսում թույլ է։

Այս ամենի պատճառով կան ԱՈՒՊ-ին առնչվող մի քանի կարևոր հարցեր, որոնք ուսուցիչները պետք է նկատի առնեն։ Դրանք և դրանց առնչվող ռեսուրսները թվարկված են ստորև։

ԱՈՒՊ-ին առնչվող կարևոր նկատառումներ

1. Ընտանիքի ներգրավվածությունը

Ընտանիքի (աշակերտը՝ ներառյալ) մասնակցությունը ԱՈՒՊ-ի կազմման գործընթացին ամենակարևոր գործոններից է։ Չնայած ուսուցիչները և գնահատող փորձագետները լավ գիտեն երեխաներին, երեխաների կյանքի փորձագետները նրանց ծնողներն են և իրենք՝ երեխաները։ ԱՈՒՊ-ը կազմելիս ներկայումս ծնողներից խնդրում են նկարագրական տեղեկություններ տալ իրենց երեխայի ֆունկցիոնալության ընթացիկ մակարդակների, երեխայի նախասիրությունների, նրա համար տհաճ բաների մասին և այլն։ Սակայն անհատական ուսուցման պլանի մշակման իդեալական կազմակերպման համար ծնողների և երեխայի կարծիքները պետք է հաշվի առնվեն կրթությանն առնչվող նպատակները, աջակցության աստիճանը և կրթության՝ ուշադրության արժանի ամենակարևոր ուղղությունները որոշելիս։ Ծնողների մասնակցությունն ավելի գործուն դարձնելու մի ձև է գործողությունների պլանի մշակման գործընթացում նրանց ներգրավելը։ Գործողությունների պլանի մշակումը գործընթաց է, որը կարող է օժանդակել բազմամասնագիտական թիմին, ծնողներին և երեխային՝ պլանավորելու ԱՈՒՊ-ի նպատակները, օգնելու հասնել ցանկալի ապագային։

Ամփոփելով պետք է ասել, որ երեխաների կրթության և զարգացման գործընթացների վերաբերյալ կարևոր տեղեկատվությանը ծանոթանալը կօգնի մեզ դառնալ մեր սովորողի ԱՈՒՊ-ի թիմի վստահ անդամ։

ՀՀ-ում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը կատարվում է ԲՀՄԳ կենտրոնի կողմից: Հետազոտության արդյունքների համաձայն թե՛ մայրաքաղաքում, թե՛ մարզերում ծնողների շրջանում գոյություն ունի թերտեղեկացվածություն կրթական կարիքների գնահատման գործընթացի էության և դրա նպատակների վերաբերյալ: Սակայն, եթե Երևանում ծնողները քիչ թե շատ տեղեկացված են, թե երբ և ինչպես է տեղի ունեցել իրենց երեխաների կարիքների գնահատումը, ապա մարզերում ծնողների մի զգալի մասն ընդհանրապես պատկերացում չուներ այդ գործընթացի մասին: Սա ամենևին չի նշանակում, որ գնահատումն ընդհանրապես տեղի չի ունեցել: Պարզապես գործընթացի նպատակը ծնողների մի մասը՝ 34 ծնողից 14-ը, չի ընկալել:Ո՛չ դպրոցի, ո՛չ էլ գնահատման կենտրոնի մասնագետները ծնողներին պատշաճ կերպով չեն բացատրել կարիքների գնահատման էությունը. Ծնողները նշում էին, որ եկել են ինչ-որ մարդիկ Երևանից կամ այլ հարակից մարզերից, և երեխայի հետ զրուցել են, գույներ են ցույց տվել, հարցեր են տվել, ու վերջում եզրակացրել են, որ երեխան կարող է գնալ/շարունակել գնալ դպրոց: Երբեմն կարիքների գնահատումը նույնացվում է կարիքները հոգալու համար անհրաժեշտ օգնության տրամադրման հետ: Օրինակ՝ ուսումնասիրված դեպքերից մեկում ծնողը խիստ վրդովված էր այն հանգամանքով, որ գնահատումից հետո իր երեխային չեն տրամադրել սայլակ, և նա ստիպված է եղել խնդիրը լուծել սեփական ուժերով: Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ ծնողը հետամուտ է եղել իր երեխայի կրթական կարիքների գնահատմանը, ապա առանձնացվում է գործընթացի հետ կապված երկու հիմնական դժգոհություն: Ինչպես փաստում է ԲՀՄԳ կենտրոնի տնօրենը, երեխայի կրթական կարիքների գնահատումը կարող է տևել մեկ օրից մինչև 2 շաբաթ՝ կապված դեպքի բարդությունից և լրացուցիչ մասնագետներ ներգրավվելու անհրաժեշտությունից: Այդուհանդերձ, տվյալ հետազոտության մեջ ներառված դեպքերի գերակշիռ մեծամասնությունում գնահատումը տևել է մեկից երկու օր: Որոշ ծնողների հավաստմամբ 1-2 օրում անհնար է ճշգրիտ պատկերացում կազմել երեխայի կարիքների մասին: Անհրաժեշտ է տևական ժամանակ և այցելություններ դպրոցներ, քանի որ հավանական է, որ իր համար հարազատ միջավայրում երեխան ավելի անկաշկանդ վարք կցուցաբերի և կպատասխանի այն հարցադրումներին, որոնց չի կարողացել պատասխանել օտար վայրում՝ անծանոթ մարդկանցով շրջապատված:

ԲՀՄԳ կենտրոնի սահմանափակ թվի հետևանքով որոշ դեպքերում գնահատման գործընթացը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ երեխան արդեն հաճախում էր դպրոց: Ուսումնասիրված դեպքերից մեկում երեխային գնահատել են դպրոց գնալուց մեկ տարի անց: Բազմաթիվ ծնողների հավաստմամբ ցանկալի է, որ երեխաների կրթական կարիքները վերագնահատվեն առավել հաճախ, օրինակ՝ տարին մեկ անգամ ներկայիս երկու տարին մեկ հաճախականության փոխարեն: Երևանի ծնողների մի մասը պնդում է, որ կասկածանքով է վերաբերվում ԲՀՄ կենտրոնի կողմից կիրառվող գնահատման մեթոդներին, որոնք ընկալվում են որպես պարզունակ: Մեթոդների խնդիրը ընդունվում է նաև կենտրոնի մասնագետների կողմից: ԲՄՀ գնահատման կենտրոնի տնօրենը նշեց, մի քանի ամիս է, ինչ թիմն աշխատում է գնահատման գործիքների կատարելագործման ուղղությամբ՝ համագործակցելով UNICEF-ի և մի շարք միջազգային փորձագետների հետ, և օգտագործելով արտերկրում վերապատրաստումների արդյունքում ձեռքբերված փորձն ու գիտելիքները: Թե ե՞րբ և ինչպե՞ս և ի՞նչ հիմքերով են փոխվելու գնահատման գործիքները, տնօրենը չմասնավորեցրեց Եվս մեկ կարևոր նկատառում: ԲՀՄ գնահատման կենտրոնի կանոնադրության համաձայն՝ վերջինս պատասխանատու է միայն կրթության առանձնահատուկ կարիքների գնահատման և ոչ թե վկայագրման կամ ուղղորդման համար: Օրենքով սահմանված կարգով վկայագրումը տեղի է ունենում տարածքային կառավարման պետական մարմնի կողմից՝ տրված երզակացության հիման վրա: Ինչպես նշում էին ուսումնասիրված դպրոցների տնօրենները՝ եղել են դեպքեր, երբ ներկայացված գնահատումների արդյունքում ոչ բոլոր երեխաներն են ընդգրկվել ներառական կրթության ծրագրում: Այդուհանդերձ, ծնողների գերակշիռ մեծամասնությունը համոզված է, որ հենց ԲՀՄԳ կենտրոնն է տալիս վերջնական եզրակացություն՝ երեխային ներառելու կամ չներառելու վերաբերյալ: Այժմ անդրադառնանք գործնականում ԱՈՒՊ-երի կազմման և կիրառության առանձնահատկություններին: Տնօրենների և բազմանասնագիտական թիմի անդամների հավաստմամբ ԱՈՒՊ-երը կազմվում են օրենքի համաձայն՝ հատուկ մանկավարժի, սոցիալական մանկավարժի, ուսուցչի, ինչպես նաև ծնողի մասնակցությամբ: Յուրաքանչյուր ուսուցիչ ունի իր առարկայի համար հատկացված բաժինը, որտեղ նշումներ է կատարվում երեխայի ներկայիս վիճակի, դրված

նպատակի, գործողությունների պլանի և առաջադիմության մասին: Բացի այդ, նշումներ են կատարում նաև հոգեբանը, հատուկ մանկավարժը, լոգոպեդը, և այլն: Ինչպես վկայում են հետազոտության արդյունքները՝ գործնականում ԱՈՒՊ-երի որպես այդպիսիների և դրանց կազմման գործընթացների շուրջ գոյություն ունեն մի շարք հակադիր մոտեցումներ և կարծիքներ՝ բազմամասնագիտական թիմի անդամների և ՆԴ տնօրենների մոտ: Մի շարք հատուկ մանկավարժներ դժգոհում են ԱՈՒՊ-երի ձևաթղթային սահմանափակումներից: Մասնավորապես այն հնարավորություն չի տալիս նշումներ կատարել ոչ միայն հիմնական խնդիրների, այլև ենթախնդիրների վերաբերյալ՝ պատճառահետևայնքային կապերի բացահայտման և երեխայի հետ աշխատանքն առավել արդյունավետ կազմակերպելու համար:

Գլուխ 2 Խորհուրդներ ուսուցիչներին

1. ԱՈՒՊ-ի նպատակները մշակելիս օգտվել կոնկրետ, չափելի, հասանելի, իրատեսական և ժամկետային մոտեցումներից:

2. Ըստ անհրաժեշտության՝ ԱՈՒՊ-ում անդրադառնալ ակադեմիական, ֆունկցիոնալ և սոցիալական նպատակներին:

3. Ծնողներին և աշակերտին միշտ ընդգրկել ԱՈՒՊ-ի մշակման գործընթացում,

4. ԱՈՒՊ-ի մշակմանն ուղղված քննարկումների ընթացքում երեխայի համար տարբերակների և հարմարությունների ընտրությունը և գործողությունների պլանի մշակումը հնարավորություն են տալիս ունենալու առավել կառուցողական հանդիպումներ:

Մտքեր ղեկավարների համար

1. ԱՈՒՊ-ներն օգնում են դպրոցական թիմերին պլանավորելու ուսուցումը և ծառայությունների տրամադրումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին: Դպրոցների ղեկավարները պետք է ներկա լինեն ԱՈՒՊ-ի մշակման նպատակով կազմակերպվող հանդիպումներին, որպեսզի իմանան, թե ի՞նչ ռեսուրսներ կարող են անհրաժեշտ լինել և թե ինչպե՞ս է իրենց անձնակազմը հասնելու նպատակներին:

2. ԱՈԻՊ-ը կազմող թիմերը (բազմամասնագիտական թիմեր) կարող են շտապել նպատակներին հասնելու համար, առանց հաշվի առնելու աշակերտների և նրանց ընտանիքների հույսերը: Այս առումով կօգնի երեխաների համար տարբերակների և հարմարությունների ընտրությունն ու գործողությունների պլանի մշակումը:

3. ԱՈԻՊ-ներն անհատականացված են, հետևաբար, մի աշակերտի համար սահմանված նպատակները:

ՀՀ-ում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը կատարվում է ԲՀՄԳ կենտրոնի կողմից: Հետազոտության արդյունքների համաձայն թե՛ մայրաքաղաքում, թե՛ մարզերում ծնողների շրջանում գոյություն ունի թերտեղեկացվածություն կրթական կարիքների գնահատման գործընթացի էության և դրա նպատակների վերաբերյալ: Սակայն, եթե Երևանում ծնողները քիչ թե շատ տեղեկացված են, թե երբ և ինչպես է տեղի ունեցել իրենց երեխաների կարիքների գնահատումը, ապա մարզերում ծնողների մի զգալի մասն ընդհանրապես պատկերացում չուներ այդ գործընթացի մասին: Սա ամենևին չի նշանակում, որ գնահատումն ընդհանրապես տեղի չի ունեցել: Պարզապես գործընթացի նպատակը ծնողների մի մասը՝ 34 ծնողից 14-ը, չի ընկալել:Ո՛չ դպրոցի, ո՛չ էլ գնահատման կենտրոնի մասնագետները ծնողներին պատշաճ կերպով չեն բացատրել կարիքների գնահատման էությունը. Ծնողները նշում էին, որ եկել են ինչ-որ մարդիկ Երևանից կամ այլ հարակից մարզերից, և երեխայի հետ զրուցել են, գույներ են ցույց տվել, հարցեր են տվել, ու վերջում եզրակացրել են, որ երեխան կարող է գնալ/շարունակել գնալ դպրոց: Երբեմն կարիքների գնահատումը նույնացվում է կարիքները հոգալու համար անհրաժեշտ օգնության տրամադրման հետ: Օրինակ՝ ուսումնասիրված դեպքերից մեկում ծնողը խիստ վրդովված էր այն հանգամանքով, որ գնահատումից հետո իր երեխային չեն տրամադրել սայլակ, և նա ստիպված է եղել խնդիրը լուծել սեփական ուժերով: Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ ծնողը հետամուտ է եղել իր երեխայի կրթական կարիքների գնահատմանը, ապա առանձնացվում է գործընթացի հետ կապված երկու հիմնական դժգոհություն: Ինչպես փաստում է ԲՀՄԳ կենտրոնի տնօրենը, երեխայի կրթական կարիքների գնահատումը կարող է տևել մեկ օրից մինչև 2 շաբաթ՝ կապված դեպքի բարդությունից և լրացուցիչ մասնագետներ ներգրավվելու

անհրաժեշտությունից: Այդուհանդերձ, տվյալ հետազոտության մեջ ներառված դեպքերի գերակշիռ մեծամասնությունում գնահատումը տևել է մեկից երկու օր: Որոշ ծնողների հավաստմամբ 1-2 օրում անհնար է ճշգրիտ պատկերացում կազմել երեխայի կարիքների մասին: Անհրաժեշտ է տևական ժամանակ և այցելություններ դպրոցներ, քանի որ հավանական է, որ իր համար հարազատ միջավայրում երեխան ավելի անկաշկանդ վարք կցուցաբերի և կպատասխանի այն հարցադրումներին, որոնց չի կարողացել պատասխանել օտար վայրում՝ անծանոթ մարդկանցով շրջապատված: ԲՀՄԳ կենտրոնի սահմանափակ թվի հետևանքով որոշ դեպքերում գնահատման գործընթացը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ երեխան արդեն հաճախում էր դպրոց: Ուսումնասիրված դեպքերից մեկում երեխային գնահատել են դպրոց գնալուց մեկ տարի անց: Բազմաթիվ ծնողների հավաստմամբ ցանկալի է, որ երեխաների կրթական կարիքները վերագնահատվեն առավել հաճախ, օրինակ՝ տարին մեկ անգամ ներկայիս երկու տարին մեկ հաճախականության փոխարեն: Երևանի ծնողների մի մասը պնդում է, որ կասկածանքով է վերաբերվում ԲՀՄ կենտրոնի կողմից կիրառվող գնահատման մեթոդներին, որոնք ընկալվում են որպես պարզունակ: Մեթոդների խնդիրը ընդունվում է նաև կենտրոնի մասնագետների կողմից: ԲՄՀ գնահատման կենտրոնի տնօրենը նշեց, մի քանի ամիս է, ինչ թիմն աշխատում է գնահատման գործիքների կատարելագործման ուղղությամբ՝ համագործակցելով UNICEF-ի և մի շարք միջազգային փորձագետների հետ, և օգտագործելով արտերկրում վերապատրաստումների արդյունքում ձեռքբերված փորձն ու գիտելիքները: Թե ե՞րբ և ինչպե՞ս և ի՞նչ հիմքերով են փոխվելու գնահատման գործիքները, տնօրենը չմասնավորեցրեց Եվս մեկ կարևոր նկատառում: ԲՀՄ գնահատման կենտրոնի կանոնադրության համաձայն՝ վերջինս պատասխանատու է միայն կրթության առանձնահատուկ կարիքների գնահատման և ոչ թե վկայագրման կամ ուղղորդման համար: Օրենքով սահմանված կարգով վկայագրումը տեղի է ունենում տարածքային կառավարման պետական մարմնի կողմից՝ տրված երգակացության հիման վրա: Ինչպես նշում էին ուսումնասիրված դպրոցների տնօրենները՝ եղել են դեպքեր, երբ ներկայացված գնահատումների արդյունքում ոչ բոլոր երեխաներն են ընդգրկվել ներառական կրթության ծրագրում: Այդուհանդերձ, ծնողների գերակշիռ մեծամասնությունը համոզված է, որ հենց ԲՀՄԳ կենտրոնն է տալիս վերջնական

եզրակացություն՝ երեխային ներառելու կամ չներառելու վերաբերյալ: Այժմ անդրադառնանք գործնականում ԱՈԻՊ-երի կազմման և կիրառության առանձնահատկություններին: Տնօրենների և բազմանասնագիտական թիմի անդամների հավաստմամբ ԱՈԻՊ-երը կազմվում են օրենքի համաձայն՝ հատուկ մանկավարժի, սոցիալական մանկավարժի, ուսուցչի, ինչպես նաև ծնողի մասնակցությամբ: Յուրաքանչյուր ուսուցիչ ունի իր առարկայի համար հատկացված բաժինը, որտեղ նշումներ է կատարվում երեխայի ներկայիս վիճակի, դրված նպատակի, գործողությունների պլանի և առաջադիմության մասին: Բացի այդ, նշումներ են կատարում նաև հոգեբանը, հատուկ մանկավարժը, լոգոպեդը, և այլն: Ինչպես վկայում են հետազոտության արդյունքները՝ գործնականում ԱՈԻՊ-երի որպես այդպիսինների և դրանց կազմման գործընթացների շուրջ գոյություն ունեն մի շարք հակադիր մոտեցումներ և կարծիքներ՝ բազմամասնագիտական թիմի անդամների և ՆԴ տնօրենների մոտ: Մի շարք հատուկ մանկավարժներ դժգոհում են ԱՈԻՊ-երի ձևաթղթային սահմանափակումներից: Մասնավորապես այն հնարավորություն չի տալիս նշումներ կատարել ոչ միայն հիմնական խնդիրների, այլև ենթախնդիրների վերաբերյալ՝ պատճառահետևայնքային կապերի բացահայտման և երեխայի հետ աշխատանքն առավել արդյունավետ կազմակերպելու համար: Մանկավարժների մյուս խումբը՝ հակառակը, համոզված է, որ ԱՈԻՊ-ը իբրև փաստաթուղթ բավականին հագեցած է ավելորդ տեղեկատվությամբ և ենթաբաժիններով, ինչի արդյունքում մի շարք ուսուցիչներ ուղղակի ժամանակ չեն ունենում պատշաճ կերպով լրացնել իրենց հատկացվող բաժինները:

Եզրակացություն

- Հետազոտական աշխատանքը իրականացնելիս եկանք այն եզրակացության, որ ներառական կրթության առաջնահերթ խնդիրներից է սովորողների կրթադաստիարակչական աշխատանքներում և մասնագիտական կրթության ձեռքբերման ընթացքում հնարավոր խոչընդոտների հաղթահարման ուղիների որոնումը: Ներառական կրթության արդյունավետ իրականացումը պահանջում է մեծ ջանքեր և նեդրումներ: Այս հարցի լուծմանը մեծապես կարող է նպաստել բոլոր սովորողների, այդ թվում նաև՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/ անձանց դաստիարակության ճիշտ և արդյունավետ կազմակերպումը, ինչի շնորհիվ ձևավորվում է որոշակի վերաբերմունք սեփական և այլ անձանց առողջության նկատմամբ, առաջնահերթ կարևորվում է յուրաքանչյուրի ֆիզիկական և մտավոր առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու հնարավորությունը: Աշխատանքը իրականացնելիս իրազեկվեցինք, որ մեր իրականության մեջ ներառական կրթության համակարգն աստիճանաբար ընդգրկում է տարբեր ուսումնական հաստատություններ՝ նախակրթարաններ, հանրակրթական դպրոց, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ: Համաշխարհային արդի զարգացումները, շրջակա միջավայրում և հասարակական հարաբերություններում կատարվող աննախադեպ փոփոխությունները անմիջական ներգործություն են ունենում մարդու առողջության և հասարակական համակեցության վրա՝ տարատեսակ խնդիրների թվում առաջին պլան մղելով կրթության դերի կարևորումն ու որակի բարելավումը:
- Հետազոտական աշխատանքի թեման հետաքրքիր և արդիական էր, քանի որ ԱՈՒՊ-ը ամենակարևոր գործիքներից է, որով կարելի է օգնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին՝ իրականացնելու իրենց կրթության իրավունքը դպրոցում:
- ԱՈՒՊ-ը ներկայացնում է կրթության լավագույն գործելակերպի օրինակ, որովհետև կա բազմամասնագիտական թիմ, որը գաղափարներ է տալիս երեխաների նպատակների վերաբերյալ: Այս թիմում միշտ ներկա է ծնողը:

ԱՈԻՊ-ի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ երեխայի նպատակները պահվում են ուշադրության կենտրոնում: Այս նպատակները պետք է սահմանվեն այնպես, որ լինեն կոնկրետ, չափելի, հասանելի, իրատեսական և ժամկետային, որպեսզի հնարավոր լինի առաջընթացին հետևել ամբողջ տարին: Նպատակները կարող են լինել ակադեմիական (միտված ուսումնառությանը), սոցիալական (միտված ընկերներ ձեռք բերելուն և նրանց հետ հաղորդակցվելուն) կամ ֆունկցիոնալ (միտված անկախ ու ինքնուրույն ապրելու հմտություններին):

Առաջարկություն

Հետազոտական աշխատանքը իրականացնելիս՝ հասկացանք, որ ԱՈԻՊ-ը բարդ փաստաթուղթ է և երբեմն ուսուցիչները խուսափում են այդ բարդ գործընթացից, այդ իսկ պատճառով ցանկալի է ԱՈԻՊ-ի լրացման գործընթացը կրճատել և դարձնել ավելի մատչելի թե՛ ուսուցչի, թե՛ ծնողի համար:

Եզրույթների բառարան

Ներառական կրթություն - յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումը:

Կրթության առանձնահատուկ պայմաններ - անձի հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի և ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաև՝ մանկավարժական, սոցիալական և այլ ծառայությունների ամբողջություն:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ - ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող անձ, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ - ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցություն, որը ցուցաբերվում է սովորող երեխային, նրա ծնողին և մանկավարժական աշխատողին:

Անհատական ուսուցման պլան - հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (ներառյալ՝ աջակցող ծառայությունները):

Գրականության ցանկ

1. ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն-Երևան 2013
2. ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ – Երևան 2017
3. Ներառական կրթության ռազմավարություններ Դասագիրք- Երևան 2019
4. ԱՌՈՊ (ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆ) ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ - Հ. Ադամյան
5. https://hmk.am/wpcontent/uploads/2021/04/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.-%D4%B4%D5%A1%D5%BD%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80%D6%84.pdf/10.11.2022/
6. https://hmk.am/wp-content/uploads/2021/04/Ներառական-կրթություն-2017.pdf /10.11.2022/
7. https://hmk.am/wp-content/uploads/2021/03/IEP-tips-teachers.pdf /10.11.2022/
8. https://hmk.am/wp-content/uploads/2021/04/Inclusive-education-report_ARM-without-tools.pdf /10.11.2022/